Ավետիք Իսահակյան

Կյանքըս դալար ու լալազար

Կյանքըս դալար ու լալազար,
ոսկի օրերս ո՞ւր գընացին.
Իմ գարունքվա, զառ գարունքվա
վառ ծաղիկներս ո՞ւ գընացին.
Սրտիս լարերն մեկ – մեկ կըտրան,
բլբուլներըս ո՞ւր գընացին.
Երազներըս կանանչ – կարմիր,
արեգակներս ո՞ր գընացին:

Գոհար – աստղունք իմ սըրտի մեջ
շողք տըվեցին ու շո՛ւտ մարան,
Հովերի հետ վարդեր գըգվող
խաս թևերըս մատաղ կոտրան.
Խորունկ սիրտըս հուր – հընոց էր,
սերս ու երգըս բոցի նըման,
Հիմի կյանքըս մութ ու ձըմեռ,
արեգակներս ո՞ւր գընացին:

Սրտի մեջն է կյանքը մարդուս,
սիրտն որ կոտրավ, կյանքն ի՞նչ պետք է.
Սերըս մարավ, աստղը սրտիս,
աստըղս մարավ, սիրտն ի՞նչ պետք է.
Ազիզ մի սիրտ սերըս կուզեր,

փուչ աշխարհը անկամորդ է.
Մանկուց ապրա ծարավ – պապակ,

1. արեգակներս ո՞ւր գընացին:

Ա՜խ, աշխարհը տուն է սրգի,
հիմքը նրրա մահի վրրա.
Մարդն հողեղեն խեղճ ճիճու է,
հողի վրա միշտ պիտ սողա.
Թե թագավոր անհաղթ լինի,
տերևի պես միշտ պիտ դողա,
Խելքը մարդուս ցավ ու ցեց է,

1. արեգակներս ո՞ւր գընացին:

Ա՜խ, սարեսար ու դարբեդար՝
Դարդրս առնիմ, մենակ ման գամ,
Ու ծովեծով էս աշխարհով
շվաքի պես տրխուր ման գամ.
Ընկեր գրտնիմ, սիրտրս բանամ,
Դարդրս ասեմ, ու կուշտ մի լամ,
Ընկերներրս վա՜ղ են մեռել…

1. արեգակներս ո՞ւր գընացին:

Երթամ, մրտնիմ անապատը,
ժեռ քարերը սիրեմ, գրրկեմ,
Սև քարերին գլուխրս չոր
թեքեմ անհույս, խոր միտք անեմ.
Ու պատանքրս հետրս ման տամ,
գերեզմանրս ինքրս փորեմ,
Կյանքրս թրռավ, օրրս հասավ,

1. արեգակներս ո՞ւր գընացին:

1899

Ալեքսանդրապոլ